ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1463 24.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սեպտեմբեր ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ, արձանագրել էր թերություններ և խախտում:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 3752
26 09 2014

Թերություններ՝

1. Ինչպես նախորդ այցելության ժամանակ, այնպես էլ այս այցելության ընթացքում լոգարանում առկա էր տհաճ հոտ և օդափոխության կարիք էր զգացվում, սակայն հնարավորություն չկար:
2. Ինչպես նախորդ այցելության ժամանակ, այնպես էլ այս այցելության ընթացքում ճաշասենյակում բացակայում էր աման լվանալու հեղուկը և սննդի տաքացուցիչը:
3. ՁՊՎ-ում առկա էր ժամային ջրամատակարարում, և ՁՊՎ-ում բացակայում էր ջրի բաքը իր մղիչ պոմպով: Դիտորդական խումբը այցելության ընթացքում փաստեց, որ հավաքարարը աշխատանքներ էր կատարում ՁՊՎ-ում և Դիտորդական խումբը արձանագրեց, որ ամանները լվանում էր <<Raxsha>> -ով՝ ջուր չլինելու պայմաններում, հայտնենք, որ այն թունավոր է:

<< Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք Թիվ 7511
25 09 2014թ.

Խախտումներ՝

1. Դիտորդական խմբի նախորդ այցելության ընթաքում, արձանագրվել էր, որ ՁՊՎ ընդունված 95 անձանցից ոչ ոք մարմնական վնասվածք չի ունեցել, քանի որ համապատասխան <<Ձերբակալվածների բուժօգնության կամ բուժզննության>>

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

գրանցամատյանում բացակայում էին շտապ օգնության բժիշկներ հրավիրելու մասին և մարմնական վնասվածքները գրանցելու գրառումները:

Դիտորդական խումբը այս ամենը հիմք ընդունելով սույն թվականի օգոստոսի 26-ին թիվ 2621/1449 գրությամբ ՀՀ ոստիկանությանը խնդրել էր, որպեսզի տրամադրվեր տեղեկության, թե հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՀՊՎ մարմնական վնասվածքներով քանի անձ է ընդունվել : Ի պատասխան Դիտորդական խմբի գրությանը 10.09.2014թ-ի թիվ 2/2-1-2210 գրությամբ, տեղեկացրել էիք, որ նշված ժամանակահատվածում արձանագրվել է 12 մարմնական վնասվածքներով ընդունված անձանց դեպք:

Դիտորդական խումբը ներկայացված բոլոր փաստերի հիմքով այցելության ընթացքում պարզաբանում խնդրեց ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի հերթապահ մասի պետից, ով մեկնաբանեց, մեջբերում ենք խոսքը. << *Մարմնական վնասվածքներ ունեցած անձանց դեպքում, եթե անձը հրաժարվում է բուժօգնությունից, չենք հրավիրում բժիշկ և բուժնությունը իրականացնում ենք մենք, առանց որևէ տեղ նշումներ կատարելու, և իրազեկում ենք վարույթն իրականացնող մարմնին*>>: Ավելացնենք նաև, որ նախորդ այցելության ընթացքում Դիտորդական խումբը հարցրել էր մարմնական վնասվածքներով անձիք ընդունվել են ՀՊՎ, վարչակազմը պնդել էր, որ ոչ: Եթե տվյալ մեկնաբանությունը տրվեր նախորդ այցելության ընթացքում, Դիտորդական խուբը այդ ժամանակ կարձանագրեր, որ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի պատասխանատու անձիք խախտում են <<ՀՊՎ-ների ներքին կանոնակարգի 05.07.2008թ-ի թիվ 574 –Ն որոշման 13-րդ կետի պահանջները և միաժամանակ անտեսում են ՀՀ ոստիկանության կողմից տրված հանձանարարականը:

Դիտորդական խումբը կարծում է, որ այդ ամենը վարչակազմի կողմից կատարվել է Դիտորդական խմբին ապակողմնորոշելու նպատակով:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

արգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-_____ «29» 10 2014թ.

Ձեր 24.09.2014թ. թիվ 2621/1463 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Լոռու մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Տարոնի բաժնի ՁՊՎ-ի խցերը և մյուս բոլոր սենյակները ամեն օր մաքրվում են, իսկ լոգարանի օդափոխությունը կատարվում է էլեկտրական օդափոխիչի միջոցով:

2. Սննդի տաքացման սենյակում առկա են էլեկտրական տաքացման սալիկը և ման լվանալու հեղուկը, որը գտնվում է պահարանում:

Միաժամանակ Ձեզ է ուղարկվում վերոհիշյալ հանգամանքները հաստատող ոստիկանության Տարոնի բաժնի կողմից տրամադրված լուսանկարները:

3. Ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, այդ իսկ պատճառով լոգարանում ջրի բաք և պոմպ տեղադրելու անհրաժեշտություն չի առաջացել: Ինչ վերաբերվում է դիտորդների այցելության ժամանակ ՁՊՎ-ում ջրամատակարարման բացակայությանը, ապա Լոռու մարզի <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից Վանաձոր քաղաքում նոր ջրագծերի անցկացման պատճառով 18.09.2014թ. մի քանի ժամով ջրամատակարարումը դադարեցվել է:Ներկայումս միջոցներ են ձառնարկվում ՁՊՎ-ում ջրի բաք և մղիչ պոմպ տեղադրելու ուղղությամբ:

Դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ում մաքրություն իրականացնող աշխատակիցը լվացել է ոչ թե ափսեները, այլ՝ սննդի տաքացման սենյակի լվացարանը, իսկ ափսեները և բաժակները նախապես վերցրած ջրով արդեն իսկ լվացված են եղել:

4. 2014թ. հունվարի 1-ից հունիսի 28-ն ընկած ժամանակահատվածում ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ-ում պահվել են թվով 95 անձինք, ովքեր <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարել են գրառումներ իրենց առողջության վերաբերյալ գանգատ չունենալու մասին և ստորագրել: Թվով 12 անձանց մոտ

հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, որոնց վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին տրվել են իրազեկումներ՝ նրանցից 11-ի մոտ՝ մարմնի արտաքին զննությամբ սպիներ և վնասվածքներ հայտնաբերելու ու 1 անձի մոտ առողջության վերաբերյալ գանգատներ ունենալու մասին: Վերջինիս բուժօգնություն ցուցաբերելու նպատակով հրավիրվել է շտապօգնության խումբ, որի կողմից ցուցաբերվել է բուժօգնություն և <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել է գրառում: Մյուս 11 անձանց մոտ առկա մարմնական վնասվածքները եղել են սպիացած վերքերի և քերծվածքների տեսքով: Վերջիններս առողջության վերաբերյալ գանգատ չեն հայտնել, հրաժարվել են բուժօգնությունից, որի վերաբերյալ կատարել են գրառումներ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

Լոռու մարզային վարչության շտաբի կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ի վարչակազմի կողմից որևէ միտում չի եղել դիտորդների խմբին ապակողմնորոշելու համար, ինչպես նաև հիմնավորվել է, որ ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի ծառայողների կողմից խախտվել են ՀՀ կառավարության 05.07.2008թ. թիվ 574-Ն որոշմանբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>ի 2- րդ գլխի 13-րդ կետի պահանջները, որի համար ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի պետ Հ.Զաքարյանը խիստ նախազգուշացվել է, իսկ վերը նշված խախտման հանգամանքները քննարկվել են ոստիկանության Լոռու մարզային վարչության ենթակա ստորաբաժանումների օպերատիվ խորհրդակցություններում՝ հետագայում նմանատիպ խախտումները բացառելու համար:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ ՀՄ ՀՄԳՂ բաժանմունքի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությանը և ենթակա ստորաբաժանումներին ցուցաբերված գործնական-մեթոդական օգնության ընթացքում նույնպես արձանագրվել է վերը նշված խախտումը, որի կապակցությամբ տրվել են հանձնարարականներ:

ՀՀ ոստիկանության շտաբ